ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.04.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ ՍՑ-ԼՕ-2019/19 ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Տ. Ստեփանյանի՝ «ՋԻ-ԷՄ-Ջի ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը բավարարելու և «ՋԻ-ԷՄ-Ջի ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ՍՑ-ԷՍ-2019/48 ընթացակարգով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով մինչև ԵԴ/7066/02/19 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը Բողոքներ քննող անձ Էմիլ Սարգսյանին որևէ գործողություն կատարելն արգելելու վերաբերյալ 28.03.2019թ. կայացված որոշումը, ինչպես նաև հաշվի առնելով, որ 25.02.2019թ. թիվ ՍՑ-ԷՍ-2019/48 ընթացակարգը 18.04.2019թ. մակագրվել է ինձ և տրվել նոր թիվ ՍՑ-ԼՕ-2019/19 ծածկագիրը, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

Կասեցնել ՍՑ-ԼՕ-2019/19 (ՍՑ-ԷՍ-2019/48) ծածկագրով ընթացակարգի քննությունը՝ մինչև ԵԴ/7066/02/19 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ